ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ
MUNICIPALITY OF TALIN

0501 ք.Թալին, Գայի -1.
Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ : talinihamaynqapetaran@list.ru

0501 t.Talin
Tel. 060-75-77-87
E-mail : talinihamaynqapetaran@list.ru

№ 056/2/38

07 06 2024թ.

«ՄԱՔՍՎԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Թալին համայնքի կարիքների համար *ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-24/63* ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից կազմակերպվել է գնման ընթացակարգի վերլուծություն, որի արդյունքում պարզվել է, որ Տեղեկագրում 2024 թվականի մայիսի 24-ին հրապարակված ընթացակարգի պայմանագրի կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ 43-րդ չափաբաժնի համար ընտրված մասնակից է ճանաչվել ***«Մաքսվին Գրուպ»*** **ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 08275623) (այսուհետ՝ Ընկերություն):**

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում Արամ Արարատի Հովհաննիսյանը **(Փ2)**:

Տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Մաքս Վին» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 08227143) 2024 թվականի մարտի 16-ից մինչև 2026 թվականի մարտի 16-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: **Ուշագրավ է այն, որ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Արամ Արարատի Հովհաննիսյանի և «Մաքս Վին» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Արամ Արարատի Հովհաննիսյանը հանդիսանում է նաև «Մաքս Վին» ՍՊ ընկերության տնօրեն (Փ3)**:

կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում**: ...:»

Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ***ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված***, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի: (...)

Ընդ որում՝ Կարգի 121-րդ կետի համաձայն՝ **մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:**

Ընթացակարգերի հրավերների 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ ***Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված***

մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: (...)

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով սահմանված իրավակարգավորումներով, գնահատող հանձնաժողովը որոշում կայացրեց **«*Մաքսվին Գրուպ*» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 08275623) (այսուհետ՝ Ընկերություն)** հայտը մերժել, գնահատել անբավարար և ընտրված ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

Հարգանքով՝

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Աղավնի Հովհաննիսյան
Հեռ՝ +37493 637127